490 Խավար կյանքում այս աշխարհի

1. Խավար կյանքում այս աշխարհի
Թե մենակ ես մնացել,
Դիմի՛ր դու խաչյալ Քրիստոսին:
Խոցված ձեռքերով կգրկի,
Վշտերը քո կամոքի,
Վերքերով Նա քեզ կբուժի:

Հավատա՛ Հիսուսին
Ու նոր կյանք կստանաս,
Հավատա՛ Նրան
Եվ դու կփրկվես:

2. Եթե տրտմություն դու զգաս,
Ծնկի ե՛կ խաչի առջև,
Աղջումով Նրան դու դիմի՛ր:
Երբ խնդրես, քեզ կզորացնի,
Մերկությունդ կծածկի,
Սուրբ Հոգու յուղով քեզ կօծի:

3. Հայացքդ ետ մի՛ դարձրու
Ու սիրտդ մի՛ խստացրու,
Դու քայլիր կատարյալ ճամփով,
Նայի՛ր միայն դու Հիսուսին՝
Քեզ կյանք ու լույս տվողին.
Նա է միակ Փրկիչն աշխարհի: